

1.4.2. Բնակչության դրամական եկամուտներ և ծախսեր, աշխատավարձ և այլ եկամուտներ

Բնակչության դրամական եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը: Բնակչության դրամական եկամուտները 2003թ. հունվար-նոյեմբերին կազմել են 967028.8 մլն.դրամ, իսկ դրամական ծախսերը՝ 974792.7 մլն.դրամ, դրանց աճի տեմպերը 2002թ. հունվար-նոյեմբերի համեմատ կազմել են, համապատասխանաբար, 114.5% և 116.6%:

Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները: Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները (եկամուտները՝ հանած պարտադիր վճարումները, հաշվի առած սպառողական գների ինդեքսների փոփոխությունները) 2003թ. հունվար-նոյեմբերին 2002թ. հունվար- նոյեմբերի նկատմամբ աճել են 8.9%-ով:

Բնակչության դրամական եկամուտների օգտագործման կառուցվածքը

(%)

	Տեսակարար կշիռը եկամուտներում հունվար-նոյեմբեր		2003թ. հունվար-նոյեմբերի աճի տեմպը 2002թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ	2003թ. տեսակարար կշիռն տոկոսային փոփոխությունը 2002թ. նկատմամբ
	2002	2003		
	Դրամական եկամուտներ	100		
<i>որից օգտագործվել է</i>				
ապրանքների գնման և ծառայությունների վճարման համար	74.2	76.2	117.6	2.0
պարտադիր վճարումների և կամավոր մուծումների համար	3.9	4.6	135.5	0.7
ավանդների հավելած	0.3	0.7	255.6	0.4
արտարժույթի գնում	14.9	13.7	105.4	-1.2
այլ ծախսեր	5.7	5.6	112.9	-0.1
Դրամական ծախսեր	99.0	100.8	116.6	1.8
<i>Եկամուտների գերազանցում ծախսերի նկատմամբ</i>	<i>1.0</i>	<i>-0.8</i>	<i>-</i>	<i>-1.8</i>


Աշխատանքի վարձատրություն: 2003թ. հունվար-նոյեմբերին, ըստ յուրաքանչյուր ամիս օպերատիվ վիճակագրական հաշվետվություն ներկայացնող մոտ 9000 կազմակերպությունների հաշվետվությունների նախնական տվյալների գնահատման, աշխատողների միջին անվանական աշխատավարձը կազմել է 31748 դրամ և 2002թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ ավելացել 22.5%-ով: Բյուջետային կազմակերպություններում աշխատողների աշխատավարձը, որի գնահատումը կատարվել է մոտ 4000 բյուջետային ֆինանսավորում ունեցող կազմակերպություններից ստացվող եռամսյակային հաշվետվությունների օպերատիվ տվյալների հիման վրա, կազմել է 18872 դրամ և 2002թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացել է 20.7%-ով, իսկ ոչ բյուջետային կազմակերպություններում աշխատողներին, համապատասխանաբար, 42936 դրամ և աճել՝ 22.3%-ով:

Անվանական միջին աշխատավարձի փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ և տատանումն ըստ տնտեսության ճյուղերի, 2003թ. հոկտեմբերին


	Անվանական միջին աշխատավարձը, դրամ		Ընդամենի նկատմամբ, %		Նախորդ տարվա նկատմամբ, %	
	հոկտեմբեր	հունվար-հոկտեմբեր	հոկտեմբեր	հունվար-հոկտեմբեր	հոկտեմբեր	հունվար-հոկտեմբեր
Ընդամենը	33702	31551	100.0	100.0	124.2	122.4
Արդյունաբերություն	55177	52101	163.7	165.1	121.4	134.1
Գյուղատնտեսություն	25421	25697	75.4	81.4	122.1	130.6
Անտառտնտեսություն	15978	15530	47.4	49.2	100.4	110.8

1.ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	Անվանական միջին աշխատավարձը, դրամ		Ընդամենի նկատմամբ, %		Նախորդ տարվա նկատմամբ, %	
	հոկտեմբեր	հունվար-հոկտեմբեր	հոկտեմբեր	հունվար-հոկտեմբեր	հոկտեմբեր	հունվար-հոկտեմբեր
Տրանսպորտ	49299	50847	146.3	161.2	120.8	118.9
Կապ	53593	54040	159.0	171.3	103.0	102.5
Շինարարություն	57875	47344	171.7	150.1	120.7	108.5
Առևտուր, հանրային սնունդ	18289	16044	54.3	50.9	99.7	81.4
Բնակարանային-կոմունալ տնտեսություն, կենցաղսպասարկում	40943	39851	121.5	126.3	99.8	112.3
Առողջապահություն, ֆիզկուլտուրա և սոցիալական ապահովություն	14307	13410	42.5	42.5	109.7	104.2
Կրթություն	17602	16890	52.2	53.5	122.9	119.9
Մշակույթ	15722	13266	46.7	42.0	133.9	122.2
Արվեստ	16140	14467	47.9	45.9	130.0	116.0
Գիտություն և գիտական սպասարկում	26136	24747	77.5	78.4	114.2	119.0
Վարկավորում և ապահովագրություն	107132	121443	317.9	384.9	121.3	117.1
Կառավարման ապարատ	56252	46878	166.9	148.6	147.4	126.6
Այլ	34079	28768	101.1	91.2	130.8	113.3



Աշխատավարձի տատանումն ըստ տնտեսության ծյուղերի ընդամենը միջինի նկատմամբ, %



Անվանական և իրական միջին աշխատավարձերի դինամիկան ըստ 2003թ. ամիսների

	Անվանական միջին աշխատավարձը, դրամ	%		Իրական աշխատավարձը, դրամ	%	
		Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ	Նախորդ ամսվա նկատմամբ		Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ	Նախորդ ամսվա նկատմամբ
Հունվար	27669	117.4	86.6	26579	93.9	83.1
Փետրվար	27813	118.2	100.5	28237	119.8	102.1
Մարտ	29728	119.9	106.9	29877	127.0	107.4
Ապրիլ	29758	120.4	104.8	29175	117.7	98.1
Մայիս	30796	119.6	103.5	30431	123.1	102.3
Հունիս	31852	119.3	103.4	31412	122.0	102.0
Հուլիս	33103	125.3	103.9	35030	131.1	110.0
Օգոստոս	33303	126.6	100.6	34087	129.0	103.0
Սեպտեմբեր	34160	126.0	102.6	33327	126.7	100.1
Հոկտեմբեր ⁺	33702	124.2	98.7	33736	124.5	98.8
Նոյեմբեր ¹	33783	124.0	100.2	33056	121.8	98.1

	Անվանական միջին աշխատավարձը, ԱՄՆ դոլար		Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ, %	Իրական աշխատավարձը, ԱՄՆ դոլար		Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ, %
	2003 թ.	2002 թ.		2003 թ.	2002 թ.	
Հունվար	47	42	113.6	46	42	90.9
Փետրվար	47	42	114.0	48	41	115.3
Մարտ	50	43	116.2	51	43	121.6
Ապրիլ	51	43	118.3	50	42	114.5
Մայիս	53	44	118.6	52	43	121.5
Հունիս	54	46	118.3	54	44	121.1
Հուլիս	57	40	142.0	60	38	131.4
Օգոստոս	58	47	122.3	59	47	146.5
Սեպտեմբեր	59	49	122.0	58	51	123.1
Հոկտեմբեր ⁺	60	47	128.1	60	49	122.9
Նոյեմբեր ¹	60	47	128.4	59	48	125.5

Վերոնշյալ 9000 կազմակերպություններում աշխատողների միջին անվանական աշխատավարձը հունվար-սեպտեմբերին կազմել է 31319 դրամ, որը 2002թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացել է 22.2%-ով: Ընդ որում, պետական կազմակերպություններում աշխատողների աշխատավարձը կազմել է 24021 դրամ, որը 2002թ. հունվար-սեպտեմբերի համեմատությամբ ավելացել է 15.4%-ով, իսկ ոչ պետականում՝ 51627 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ աճելով 29.6%-ով:

¹ Գնահատական: